

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի Որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս» (Հովհ. Զ 47) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 8-ին, կիրակի.—Բարեկենդան առաջաւորաց պահոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Պարգև աբղ. Մարտիրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն» (Մատթ. ԻԴ 35) բնաբանով:

*
* *

Փետրվարի 14-ին, շաբաթ.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

Փետրվարի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբղ. Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Արդ արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. Զի տեսին աչք իմ զփրկութիւն քո» (Ղուկ. Բ 29) բնաբանով (տես էջ 50):

*
* *

Փետրվարի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 27-ին, ուրբաթ օրը, Մոսկվայի խաղաղության համաժողովից հետո Մայր Աթոռ ժամանած Փարիզի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը և Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Քեշիշյանը մեկնեցին իրենց թեմեր:

*
* *

Մարտի 1-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Եւ եղև Խաղաղութիւն մեծ» (Ղուկ. Ը 24) բնաբանով (տես էջ 3):

*
* *

Մարտի 4-ին, 6-ին և 7-ին հաջորդաբար Մայր Աթոռ ժամանեցին Գերագույն Հոգեվոր Խորհրդի անդամներ՝ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, ԱՄՆ-ի հայոց արեւվելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և պրն. Արմեն Բարսեղյանը (Փարիզ), ինչպես նաև ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

*
* *

Մարտի 8-ին, կիրակի.—Բ կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման):

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 11-ին, շաբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ գրական երեկո: Երեկոյի ընթացքում մասնագիտությամբ բժիշկ պրն. Կամո Տեր-Պետրոսյանի և ֆիզիկոս տկն. Մարի Պահուտյանի կատարմամբ հնչեցին արևմտահայ բանաստեղծների ստեղծագործություններից:

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյին ներկա էին նաև գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը:

*
* *

Մարտի 14-ին, 15-ին և 16-ին հաջորդաբար իրենց թեմեր մեկնեցին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը:

Մարտի 15-ին Փարիզ մեկնեց նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրն. Արմեն Բարսեղյանը:

*
* *

Մարտի 15-ին, կիրակի.—Գ կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Արամ աբղ. Բոյաջյանը՝ «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո, Եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո, արա զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց» (Ղուկ. ԺԵ 18—20) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 18-ին, շաբաթ.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

* *
*

Մարտի 22-ին, կիրակի.—Դ կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ քհն. Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Զավեն աբղ. Խաչատրյանը՝ «Զի որդիք աշխարհիս ազգիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ» (Ղուկ. ԺՁ 8) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 25-ին, շաբաթ.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ: